Ուղղությունը. Ֆինանսներ, բակալավրիատ, հեռակա ուսուցում

Առարկա. Ֆինանսներ

<u>Անոտացիա</u>

Աշխատատարությունը՝ *6 կրեդիտ, 216 ակադեմիական ժամ*

Ստուգարք

Համառոտ նկարագրություն. Դասընթացն ընդգրկում է «Ֆինանսներ» տիպային ուսումնական դասընթացի հիմնական բաժինները: Նյութը համապարփակ պատկերացում է տալիս երկրի ֆինանսական համակարգի և դրա հիմնական (բազային) տարրերի մասին: Դիտարկվում է պետական ֆինանսների, ձեռնարկատիրական և տնային տնտեսությունների, ինչպես նաև միջազգային ֆինանսների գործելու լոգիկան:

Դասընթացի բազային հատվածի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է իմանա ժամանակակից ֆինանսների, դրամաշրջանառության և վարկի (միկրո և մակրո մակարդակներում) գործելու օրինաչաձությունները, ֆինանսական, մոնետար տեսության, մաթեմատիկական ապահովվածության ոլորտում նորագույն հետազոտությունների հիմնական արդյունքները, դրամավարկային և ֆինանսական ինստիտուտների գործունեության առանձնահատկությունները, նրանց գործունեության ոլորտները, ֆինանսական շուկաների, ֆինանսատնտեսական ինստիտուտների վերլուծության ժամանակակից մեթոդները, դրանց կառավարման ռզմավարություններն ու մոդելները:

Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ. «Վիճակագրություն», «տնտեսամաթեմատիկական մեթոդներ և մոդելներ», «Ֆինանսական մաթեմատիկա», «Մակրոէկոնոմիկա», «Միկրոէկոնոմիկա»: